

ԴԱՍ 17. ԳԼՈՒԽ 13 — ԵՐԿՈՒ ԳԱԶԱՆՆԵՐԸ, ՅՈԹ ԿԵՐՊԱՐՆԵՐԸ

- Կինը
- Արու գավակը
- Կարմիր գազանը
- Միքայելը
- Իսրայելի փասցորդը
- Ծովից ելնող գազանը
- Երկրից ելնող գազանը... երկուսն էլ նկարագրված են այս գլխում

Յոթերորդ փողը ներկայացնում է յոթ կերպարները. (Նկատե՛ք այս այլաբանական հատվածի հրեականությունը):

1) Եվ ես կանգնեցի ծովի ավազի վրա և տեսա, որ ծովից մի գազան էր բարձրանում, որ ուներ **յոթ գլուխ** և **տասը եղջյուր**, և նրա եղջյուրների վրա՝ **տասը թագ**, իսկ նրա գլուխների վրա հայիոյության անուն:

Ձեռագրի փաստարկը. սա 12-րդ գլխի վերջին համարն է. «Նա կանգնեց...»** Հովհաննեսը «տեսավ»... Առաջին գազանը, որ 6 անգամ նշվում է Հայտնությունում, ծովից է: Ծով = ժողովուրդներ, հեթանոսների՝ ց է (Հայտ. 17:15, Ես. 57:20,21): Ավելին, քան պարզապես Հոռոմ (Ղուկ. 4:6,7): (Վերանայե՛ք Դանիել 7-ի «փոքր եղջյուրը»):

Եղջյուրները = 10 թագավորներ (Հայտ. 17:12)

Եւ այն տասը եղջյուրը որ տեսար, տաս թագավորներ են. որոնք դեռ թագաւորութիւն չեն առել, այլ թագավորի պէս իշխանութիւն են անում մէկ ժամ այն գազանի հետ:

7 գլուխներ = 7 թագավորություններ (Հայտ. 17:9-10).

Այստեղ է այն միտքը որ իմաստություն ունի. այն յօթը գլուխը յօթ սարեր են որ կինը նորանց վրա նստած է. եւ եօթը թագավորներ են. 10 Հինգը ընկան, եւ մէկը կա, միյուսը դեռ չի եկել. եւ երբոր գա մի քիչ ժամանակ պէտք է փսա:

(Ներբովթ, Բար-Էլ), Եգիպտոս, Ասորեստան, Բաբելոն, Մարա-Պարսկաստան, Հունաստան (Դան. 2:39, 8:21, 11:2,3), Հոռոմ (երկու փուլերով, բաժանված «անջրպետով»):

(Քանանի նվաճման հակառակը. **սկզբնական տասը.** ամադեկացիները (Եդովմայեցիները), մովաբացիները, մադիանացիները, **երեքը.** յօթը թողված են Հեսուի համար):

2) Եվ այդ գազանը, որ տեսա, նման էր **հովազի**, ու նրա ոտքերն **արջի** ոտքերի նման էին, և բերանը՝ **առյուծի** երախի պես: Ու վիշապը նրան տվեց իր **զորությունը** և իր **աթոռը**, ու մեծ **իշխանություն**:

Առյուծ, արջ, հովազ (հակառակը) Դան. 7:3-8: Առյուծը գոռոզ է պահում իրեն, արջը խիստ է կառավարում, հովազը սրնթաց նվաճում է:

Բաբելոն, Մարա-Պարսկաստան, Հունաստան

3) Եվ ես տեսա, որ նրա գլուխներից **մեկը** կարծես թե մահացու վիրավորված էր, ու նրա մահացու վերքն ապաքինվեց, և ամբողջ աշխարհը, այս տեսնելով, զարմացավ: 4) Եվ երկրպագեցին վիշապին, որ գազանին իշխանություն տվեց. և երկրպագեցին գազանին, ասելով. «Ո՞վ կա այդ գազանի նման, և ո՞վ է, որ կարող է դրա դեմ պատերազմել»: 5) Եվ նրան մեծ բաներ ու հայհոյանքներ ասող բերան տրվեց և **քառասուներկու ամիս** շարունակելու իշխանություն տրվեց: 6) Ու հայհոյությամբ իր բերանն Աստծո դեմ բացեց, որպեսզի հայհոյի **Նրա անվանը, խորանն ու երկնքում բնակվողներին**:

«**Մեծ բերան**». Դան. 7:8,25, 11:36-38, Բ Թեսաղ. 2:4

Դան. 7:8,25 - 8 Ես մտիկ էի տալիս այն եղջիրներին, եւ անհա մի ուրիշ փոքր եղջուր դուրս ելավ նորանց մէջ, եւ այն առաջի եղջուրներից երեքը խլվեցան նորա առաջից. Եւ անհա մարդի աչքերի պէս աչքեր կային այդ եղջուրի վրա եւ մի մեծ մեծ բաներ խօսող բերան:

²⁵ Եւ Բարձրեալի դէմ խօսքեր է խօսելու եւ Բարձրեալի սուրբերին հարստահարելու է, եւ խորհելու է որ ժամանակներն ու օրէնքները փոխէ, եւ նորանք պիտի նորա ձեռքը տրվեն մինչեւ **մի ժամանակ եւ (երկու) ժամանակներ եւ կէս ժամանակ**:

Բ Թեսաղ. 2:4 – Այն հակառակորդը որ գոռոզացած է այն ամենի վրա, որ Աստուած կամ Աստուծո պաշտօնյա է անուանուած. մինչեւ որ նա Աստուծո տաճարի մէջ (իբրեւ Աստուած) նստի, եւ իր անձը ցույց տա թէ Աստուած է:

7) Եվ նրան տրվեց պատերազմելու սրբերի դեմ և հաղթելու նրանց, և իշխանություն տրվեց նրան բոլոր ցեղերի և ժողովուրդների ու լեզուների և ազգերի վրա:

Նա հաղթում է սրբերի^օն (Դան. 7:21, 8:12,24, 11:31, Հայտ. 11:7):

Համեմատեք Մաթ. 16:18 «...եւ դժոխքի դռները չեն յաղթիլ նորան»: (բոլոր սրբերը չէ, որ անպայման «Եկեղեցի» են):

8) Եվ նրան երկրպագելու են **երկրի բոլոր բնակիչները**, որոնց անուններն աշխարհի հիմնադրումից ի վեր մորթված Գառնուկի **Կենսազ գրքի մեջ** գրված չկան:

«**Երկրի բոլոր բնակիչները**». 13 անգամ: Cosmos = աշխարհը. Մաթ. 4:8-9, Հովհ. 12:31, 14:30, 18:36, Եփ. 2:2, 6:12, Ա Հովհ. 2:15-17:

Հով. 14:30 - ³⁰ Այլևս շատ չեմ խօսի ձեզ հետ, որովհետեւ այս աշխարհի իշխանը գալիս է, եւ ինձանում ոչինչ չունի:

«**Կյանքի գիրքը**». Մովսէսը տեղյակ էր դրա մասին. Ել. 32:32, Դան. 12:1 (Ես. 4:3), Ա Պետ. 1:19,20 («աշխարհի հիմնադրումից ի վեր» վերաբերվում է «գրվածներին», ոչ թե «մոթովածներին») Ղուկ. 10:17-20:

Ղուկ. 10:20 - ²⁰ Սակայն նորա համար մի ուրախացէ՛ք՝ որ ոգիները ձեզ հնազանդում են, բայց առավել ուրախացէ՛ք, որ ձեր անունները գրուած են երկնքում:

9) Ով ականջ ունի, թո՛ղ լսի: 10) Ով գերության քշի, ինքն է գերի տարվելու, ով սրով սպանի, ինքը սրով է սպանվելու: Ահա այստե՛ղ է սրբերի համբերությունն ու հավատը:

Երկրից ելնող գազանը

11) Եվ մի ուրիշ գազան տեսա, որ երկրից էր ելնում ու գառան նման երկու եղջյուր ուներ ու խոսում էր վիշապի պէս:

Երկրորդ գազանը (հ. 11) երկրից է. eretz (Իսրայէլը) Հովհ. 5:43. 3 անգամ. սուտ մարգարեն:

Հով. 5:43 - ⁴³ Ես իմ Հօր անունով եկա, եւ ինձ չէք ընդունում. եթէ ուրիշը գա իր անունով, նորան կընդունիք:

«**Եղջյուրներ**» = իշխանություն, տիրակալություն:

«**Խոսում էր**». Ծննդ. 3:1, 49:17, Բ Կորն. 11:3

2 Կոր. 11:3 - ³ Բայց վախենում եմ՝ միգուցէ ինչպէս օձն իր խորամանկությամբ խաբէց Եւային, այնպէս էլ ձեր **միտքն** ապականվի այն միամտությունից՝ որ Քրիստոսում է:

Այս առաջնորդը կարող է հրեա լինել. Եզեկ. 21:25-27, Եզեկ. 28:2-10 (թլպատություն).

Դան. 11:36-37, Հովհ. 5:43 (allos, ոչ թէ heteros): Նա ընդունվում է Իսրայելի կողմից:

Հով. 5:43 - ⁴³ Ես իմ Հօր անունով եկա, եւ ինձ չէք ընդունում. եթէ ուրիշը գա իր անունով, նորան կընդունեք:

Եզ. 21:25-26 - ²⁵ Եւ դու, ով պիղծ ամբարիշտ՝ Իսրայելի իշխան, որի օրը եկել է՝ վերջի անօրէնության ժամանակին: ²⁶ Այսպէս է ասում Տէր Եհովան...

12) Եվ իրեն նախորդող գազանի ամբողջ իշխանությունը գործի էր դնում՝ ստիպելու, որ երկիրն ու **նրա բնակիչներն** առաջին գազանին երկրպագեն, որի մահացու վերքն ապաքինվել էր:

Չար ոգով բռնված. Գործք. 16:16-18, 19:15,16:

Մատանա + 1-ին և 2-րդ գազանները = սատանայական երրորդություն:

13) Եվ մեծ նշաններ էր կատարում և անգամ մարդկանց աչքի առաջ **կրակ էր իջեցնում երկնքից**: 14) Ու այդ հրաշքներով, որ իրեն տրված էր գազանի առջև կատարելու, **երկրի բնակիչներին** մոլորեցրեց, ասելով նրանց՝ **երկրի վրա ապրողներին**, որ այդ գազանի պատկերը շինեն, որ վիրավորված էր սրով և ապրեց:

Նշաններ, հրաշքներ. Ել. 7:11, Բ Տիմ. 3:8, Բ Թեսաղ. 2:9-11

2 Թես. 2:9-10 - 9 Որի գալը սատանայի ներգործությունից է, ամեն զորությունով եւ սուս նշաններով եւ հրաշքներով. 10 Եւ անիրավության ամեն խաբեբայություններով կորուսեալների մէջ. փոխանակ նորա որ ճշմարտության սերը չ'ընդունեցին որ ապրեն, եւ նորա համար Աստուած մոլորության ներգործություն կ'ուղարկէ նորանց, որ հավատան ստության. (Նկատեք, որ վերքը նորից նրա նկարագիրն է):

Մարգարեությունը, ոչ թե «հրաշքներն ու նշաններն» են Հիսուսի առաջնային վկայությունը. Մաթ. 11:1-6: «Պատկեր». 7 հատվածներ. 13:15, 14:9,11, 15:2, 16:2, 19:20, 20:4, հմմտ. 2, 3, Մաղմ. 73:20:

Մատ. 11:4 - 4 Եւ Հիսուսը պատասխանեց եւ նորանց ասեց. Գնացեք Հովհաննէսին պատմեցեք ինչ որ լսում էք եւ տեսնում էք:

Մատ. 11:2-5 - 2 Եւ Հովհաննէսը բանտումը Քրիստոսի գործերը լսելով, իր աշակերտներից երկուսին ուղարկեց: 3 Եւ նորան ասեց, Դո՞ւ ես այն որ գալու էիր, թէ ուրիշի սպասեմք: 4 Եւ Հիսուսը պատասխան տվեց եւ նորանց ասեց. Գնացեք Հովհաննէսին պատմեցեք ինչ որ լսում էք եւ տեսնում էք: 5 Կույրերը տեսնում են, եւ կաղերը քայլում են, բորոտները սրբվում են, եւ խուլերը լսում են, մեռելները հարություն են առնում, եւ աղքատներին ավետարան է քարոզվում.

15) Եվ նրան գործություն տրվեց շունչ տալու գազանի պատկերին, որպեսզի գազանի պատկերը խոսի, և, ով գազանի պատկերին երկրպագություն չանի, նրան սպանել տա:

16) Եվ ստիպում էր բոլորին, այսինքն՝ փոքրերին ու մեծերին, հարուստներին ու աղքատներին, ազատներին ու ծառաներին, որ իրենց աջ ձեռքի կամ իրենց ճակատի վրա

դրոշմ կրեն: 17) Որպեսզի ոչ մեկը չկարողանա գնել կամ վաճառել, այլ՝ միմիայն նրանք, ովքեր ունեն դրոշմը, կամ գազանի անունը կամ նրա անվան թիվը:

«**Դրոշմ**». Մարմնի վրա նշաններ անելն արգելված է. Ղևտ. 19:28, 21:5, Բ Օր. 14:1, Ես. 49:16, Եզեկ. 9:4, Ել. 13:9,16:

18) Այստեղ է իմաստությունը. ով իմաստություն ունի, թող հաշվի գազանի թիվը. քանի որ դա մարդու թիֆս է, ու նրա թիվը վեց հարյուր վաթսուսվեց է:

6 = մարդու թիվ. շաբաթը մարդու համար (6+1)

Սողոմոնը որպես ֆինանսական կերպար. 666. Բ Մն. 9:13 (Եզրաս 2:13 հմմտ. Նեեմ. 7:18), Սաբայի թագուհի՞ն 3 Թագ. 10:2, ամրոցների աստվածուհի՞ն 3 Թագ. 11:7, վեց աստիճանով գահ 3 Թագ. 10:19, հիմնադրեց առևտուր 3 Թագ. 5:10-11, բանկային համակարգ, ձիերի առևտուր (ի հակառակ Բ Օր. 17:16), «Սողոմոնի կնիքը»:

Գողիաթը՝ որպես ռազմական կերպար 6 կանգուն, տեզը՝ 6 սիկդ, զրահը՝ 6 կտոր և այլն:

Նաբուգոդոնոսորի արձանը. Բարձրությունը՝ 60 կանգուն, լայնությունը՝ 6 կանգուն, 6 երաժշտական գործիքներ:

Ու՞մ թիվը

- Ներմուծվող չիպեր, RFID, գծիկային կոդեր և այլն, իրականացման համար:
- Հիշեք. Նրա թիֆս ու անունն են, որ ինքնության ամենակարևոր բանքն են:

Չակաքրիստոսը

Հունարեն. Anti = «հակառակ», «փոխարենը» (Լատիներեն. Քրիստոսի հակառակորդը): «Կորստի որդի՞»։ Հուդա Իսկարիովտացու «վերամարմնավորու՞մը»։ Սաղմ. 55:11-14, մահ և դժոխք ((Ես. 28:18, Հայտ. 6:8, Մաթ. 12:41-43, Հովհ. 17:12, Հովհ. 6:7, Բ Թեսաղ. 2:3, Գործք. 1:25, Հայտ. 11:7-ի հետ):

Չին Կտակարանի այլաբանություններ

- Հակառակորդ. Սաղմ. 74:8-10, Ես. 59:19, Ողբ. 4:11,12, Ամովս 3:11
- Ասորեստանցի. Ես. 10:5,12, Միք.5:5,6
- Անօրեն. Նավում 1:15
- Արյունահեղ ու խաբեբա մարդ. Սաղմ. 5:6
- Ահարկունների ճյուղ. Ես. 25:5

- Գլխավոր իշխան. Ել. 38:2
- Փախչող վիշապ. Հոբ 26:13, Ես. 27:1
- Անգութ. Եր. 30:14,23
- Հեթանոսներին ոչնչացնող. Եր. 4:7
- Թշնամի. Սաղմ. 55:3, Եր. 30:14,23
- Չար մարդ. Սաղմ. 140:1
- Շատ երկրների գլխավոր. Սաղմ. 110:6
- Հյուսիսային բանակի գլխավոր. Հովել 2:20
- Ծույլ հովիվ. Ջաք. 11:16,17
- Իշխանների թագավոր. Ովս. 8:10
- Բաբելոնի թագավոր. Ես. 14:11-20
- Փոքր եղջյուր. Դան. 7:8, 8:9
- Երկրից եղող մարդ. Սաղմ. 10:18
- Խարդախ կշեռքով առևտրական. Ովս. 12:7
- Հզոր մարդ. Սաղմ. 52:1
- Սեպ. Ես. 22:25
- Եկող իշխան. Դան. 9:26
- Տյուրոսի իշխան. Եզեկ. 28:2-10
- Իսրայելի պիղծ, չար իշխան. Եզեկ. 21:25-27
- Հպարտ մարդ. Ամբ. 2:5
- Աստծո բարկության գավազան. Ես. 10:5
- Օձի սերունդ. Ծննդ. 3:15
- Որդի առավոտի. Ես. 14:12
- Ապականող, փչացնող. Ես. 16:4,5
- Չար մարդ. Դան. 11:21
- Բռնության մարդ. Սաղմ. 140:1
- Չար. Սաղմ. 9:17, 10:2,4, Ես. 11:4, Եր. 30:14,23
- Ինքնակամ թագավոր. Դան. 11:36

Նոր կտակարանի այլաբանություններ

- Անդունդի հրեշտակ. Հայտ. 9:11
- Հակաքրիստոս (կեղծ Քրիստոս). Ա Հովհ. 2:22
- Գազան. Հայտ. 11:7, 13գլ.
- Սուտ մարգարե. Հայտ. 13
- Ստության հայր. Հովհ. 8:44, Բ Թեսաղ. 2:11
- Անօրեն. Բ Թեսաղ. 2:8

- Մեղքի մարդ. Բ Թեսաղ 2:3
- Իր անունով եկող մեկը. Հովհ. 5:43
- Խավարի իշխան. Ա Թեսաղ. 5
- Դատապարտության որդի. Բ Թեսաղ. 2:3
- Աստղ. Հայտ. 8:10, 9:1
- Պիղծ ոգի. Մաթ. 12:43
- Երկրի ողկույզ. Հայտ. 14:18

Դանիելի «70 շաբաթները» (11-րդ և 12-րդ դասեր)

- Ընդհանուր հայացք. 9:24
- 69 շաբաթները. 9:25
- (Ընդմիջում). 9:26
- 70-րդ շաբաթը. 9:27

Ընդմիջումը

Դանիել 9:26 «Եվ վաթսուներկու յոթնյակից հետո Մեսիան մահով պիտի կտրվի, բայց ոչ Իր համար. և եկող իշխանի ժողովուրդը պիտի կործանի քաղաքն ու սրբարանը, հեղեղով պիտի կործանեն, ավերուժներ են սահմանված մինչև պատերազմի ավարտը»:

(Դան. 7:17-22) «Այս չորս մեծ գազանները՝ չորս թագավորներ են, որոնք երկրից են ծագելու: Բայց Բարձրյալի սրբերը վերցնելու են թագավորությունն ու թագավորությունը հավիտյան ժառանգելու են, հավիտյանս հավիտենից»: Հետո ուզեցի չորրորդ գազանի մասին ճշմարտությունն իմանալ, որ մյուսներից տարբեր էր և խիստ ահեղ, ատաճները երկաթից ու եղունգները՝ պղնձից, ուտում էր, փշրում էր, իսկ փսացածը ոտնակոխ էր անում. նրա գլխի տասը եղջյուրների մասին և այն մյուսի մասին, որ դուրս եկավ, ում առջև երեքն ընկան. նաև այդ եղջյուրի մասին, որ աչքեր ուներ ու մեծ-մեծ բաներ խոսող բերան, որի տեսքն ավելի մեծ էր, քան իր ընկերներինը: Տեսա, որ այդ եղջյուրը պատերազմում էր սրբերի դեմ և հաղթեց նրանց: Մինչև որ եկավ Հինավուրցը, և իրավունք տրվեց Բարձրյալի սրբերին, և ժամանակը հասավ, որ սրբերը թագավորությունը վերցնեն»:

10+1=11-րդ եղջյուրը:

«Այսպես ասաց. «Չորրորդ գազանը չորրորդ թագավորությունն է լինելու երկրի վրա, որ բոլոր թագավորություններից տարբերվելու է և կուլ է տալու ամբողջ երկիրը, ոտնակոխ է անելու այն ու փշրելու: Իսկ այն տասը եղջյուրները՝ այն թագավորությունից տասը թագավորներ են բարձրանալու և նրանցից հետո մի ուրիշն է ծագելու, որ տարբեր է լինելու նախորդներից և պիտի հպատակեցնի երեք թագավորներին: Բարձրյալի դեմ մեծ խոսքեր է խոսելու և Բարձրյալի սրբերին մաշեցնելու է, խորհելու է, որ փոխի ժամանակներն ու

օրենքները, և նրանք նրա ձեռքն են տրվելու մինչև մի ժամանակ և երկու ժամանակներ ու կես ժամանակ» (Դան. 7:23-25):

11-րդ եղջյուրը. 1+2+1/2=3 զ տարի, կամ 42 ամիս, կամ 1260 օր:

«Բայց ասոյանը պիտի նստի և նրա իշխանությունը պիտի վերցնեն, որպեսզի իսպառ ոչնչացնեն ու կործանեն: Եվ թագավորությունն ու իշխանությունը և ամբողջ երկնքի ներքո գտնվող թագավորության մեծությունը պիտի տրվի Բարձրյալի սրբերի ժողովրդին. ում թագավորությունը հավիտենական թագավորություն է, և բոլոր իշխանությունները պիտի նրան ծառայեն ու հնազանդվեն: Մինչև այստեղ է խոսքի վախճանը. ինձ՝ Դանիելիս, շատ էին խռովեցնում իմ խորհուրդները, երեսիս գույնը փոխվեց, սակայն խոսքը սրտումս պահեցի» (Դան. 7:26-28):

Ալեքսանդրի մահից հետո

Չորս գեներալներ բաժանեցին կայսրությունը.

Մակեդոնիան և Հունաստանը. Անտիոգոն

Փոքր Ասիան և Տրաքոնիան. Լիսիմաքոս

Սիրիա և Բաբելոն. Սելևկոս

Եգիպտոս, Արաբիա, Իսրայել. Պտղոմեոս (Դան. 11:5-35)

«Չարավի թագավորները» «Յյուսիսի թագավորները»

Դանիել 11-րդ գլուխ

«Եվ նրանց թագավորության վերջում, երբ ամբարիշտներն իրենց լրումին հասնեն, մի կատաղի տեսքով ու մութ առեղծվածները հասկացող թագավոր է բարձրանալու: Եվ նրա իշխանությունը հզոր է լինելու, սակայն ոչ իր գործությամբ, և ահավոր ավերներ է գործելու և հաջողելու է ու բարգավաճելու է, և կործանելու է հզորներին ու **սուրբ ժողովրդին**: Իր խորամանկությամբ նույնիսկ խաբեությունը բարգավաճելու է նրա ձեռքում, իր սրտում մեծամտանալու է ու խաղաղությամբ շատերին է կործանելու. Նաև **իշխանաց Իշխանի** դեմ է բարձրանալու, բայց առանց ձեռքի կոտրվելու է» (Դան. 8:23-25):

«Թագավորը պիտի անի այն, ինչ կամենում է, և իրեն բարձրացնելու ու մեծացնելու է ամեն աստվածությունից վեր, և աստվածների Աստծո դեմ ահռելի բաներ է ասելու, և հաջողություն է գտնելու՝ մինչև բարկության լրումը, որովհետև **ինչ սահմանված է**, պետք է կատարվի: Նա արհամարելու է իր **հայրերի Աստծուն**, **կանանց ցանկությունը**, և ոչ մի աստծո նկատմամբ հարգանք չի ունենալու, որովհետև իրեն բոլորից վեր է համարելու: Մակայն Նրա փոխարեն ամրությունների աստծուն է պատվելու ու իր հայրերի չճանաչած աստծուն պատվելու է ոսկով ու արծաթով, թանկարժեք քարերով ու ցանկալի բաներով: Օտար աստծուն այսպես պիտի անի շատ ամրություններում, ում պիտի ընդունի՝ նրան մեծ

փառքի արժանացնելով ու շատերի վրա տիրել տալով և երկիրը շահի համար պիտի բաժանի: Վերջին ժամանակում Հարավի թագավորը պիտի բախվի նրա հետ, բայց Հյուսիսի թագավորը մրրիկի պես վրան պիտի հարձակվի կառքերով ու ձիավորներով և շատ նավերով. և երկրները պիտի մտնի ու պիտի ողողի ու անցնի: Եվ Փառավոր երկիրը պիտի մտնի, և շատ երկրներ պիտի ընկնեն. բայց սրանք պիտի ազատվեն նրա ձեռքից՝ Եդովմս ու Մովաբը և Ամմոնի որդիների գլխավոր մասը: Նա իր ձեռքը պիտի մեկնի երկրների վրա. և Եգիպտոսի երկիրը չպիտի կարողանա խույս տալ: Եվ պիտի տիրի Եգիպտոսի ոսկե ու արծաթե գանձերին և բոլոր թանկարժեք բաներին. և լիբանանցիներն ու եթովպացիները նրա քայլերին կհետևեն: Բայց արևելքից ու հյուսիսից լուրերը պիտի խռովեցնեն նրան, ուստի մեծ բարկությամբ պիտ գնա, որ շատերին կործանի ու ամբողջովին բնաջնջի: Եվ իր պալատի վրանները տարածելու է ծովերի միջև փառավոր **սուրբ լեռան վրա**, սակայն իր վերջին է հասնելու. և նրան օգնող չի լինելու» (Դան. 11:36-45):

Սատանայի յոթ գեր-տերությունները

- Եգիպտոս
- Ասորեստան

Դանիելի 4+1

- Բաբելոն
- Պարսկաստան
- Հունաստան
- Հռոմ
- Հռոմ II. 10 եղջյուրներ

«Ու երկնքում մի ուրիշ նշան երևաց. ահա, մի մեծ, կարմիր վիշապ, որ յոթ գլուխ ու տասը եղջյուր ուներ և յոթ թագ՝ իր գլուխների վրա» (Հայտ. 12:3):

«Եվ յոթ թագավորներ կան. հինգն ընկած են, **մեկն ապրում է**, իսկ **մյուսը դեռ չի եկել**, ու երբ գա, կարճ ժամանակ պիտի մնա» (Հայտ. 17:10):

11-րդ եղջյուրը. Դան. 7:8, 20-26, 8:9-14

Ասորեստանցին

«Եվ այս մարդը խաղաղություն պիտի լինի, երբ Ասորեստանցի մեր երկիրը մտնի. և երբ մեր պալատներում շրջի. (Միք. 5:5):

Վերջին ժամանակների վերելքները

1906թ. Պարսկաստան

1921թ. Աֆղանստան

1922թ. Եգիպտոս

1922թ. Իրաք

1924թ. Թուրքիա

1930թ. Լիբանան

1938թ. Սիրիա

1946թ. Հորդանան

1947թ. Պակիստան

1948թ. Իսրայել

Ասորեստան

Եկող համաշխարհային առաջնորդը

- «Մեծ բերան» (6 անգամ). Դան. 7:8,11,20, 11:36, Սաղմ. 52գլ., Բ Թեսաղ. 2:4
- Այդ առաջնորդը կլինի սատանայի որդի. Ծննդ. 3:15, Ես. 27:1, Եզեկ. 28:12-19, Հայտ. 13:
- Նա կլինի գիտական հանճարեղ. Դան. 7:20, 8:23, Եզեկ. 28:3
- Նա կլինի հռետորական հանճար. Դան. 7:20, Հայտ. 13:2
- Նա կլինի քաղաքական հանճար. Դան. 11:21
- Նա կլինի առևտրական հանճար. Դան. 8:25, Հայտ. 13:17, Սաղմ. 52:7, Դան. 11:38,43, Եզեկ. 28:4,5
- Նա կլինի ռազմական հանճար. Դան. 8:24, Հայտ. 6:2, Հայտ. 13:4, Ես. 14:16
- Նա կլինի կառավարման հանճար. Հայտ. 13:1,2, 17:17
- Նա կլինի կրոնական հանճար. Բ Թեսաղ. 2:4 (“Allah?”), Հայտ. 13:3,14,15
- Տես նաև. Սաղմ. 10, 52, 55, Ես. 10,11,13,14, Եր. 49-51, Չաք. 5, Հայտ. 18

Չայտնություն 13-ի երկու գագանները


- **Ծովից ելնող գագանը.**
 - 7 գլուխ, 10 եղջյուր
 - Հայհոյության անուններով գլուխներ
 - Գլուխներից մեկը. մահացու վերքն առողջացավ
 - Վիշապից իշխանություն է ստանում 42 ամսով
 - Հաղթում է սրբերին
 - Երկրի բնակիչները երկրպագում են նրան

- Բոլոր նրանք, ում անունը գրված չէ Կյանքի գրքում
- **Երկրից ելնող գազանը («Սուտ մարգարեն»)**
 - Քառան նման եղջյուրներ
 - Խոսում է վիշապի նման
 - Ստիպում է երկրի բնակիչներին՝ երկրպագել 1-ին գազանին
 - Մոլորեցնում է երկրի բնակիչներին հրաշքներով
 - Ստիպում է երկրպագել 1-ին գազանի պատկերին
- **Բոլորն** ընդունում են դրոշմ իրենց ձեռքի կամ ճակատի վրա
- Ոչ ոք չի կարող գնել կամ վաճառել առանց 1-ին գազանի անվան կամ թվի. 666:

Չաջորդ դաս

Կարդացեք 14, 15 և 16 գլուխները

Յոթնապատիկ կառուցվածքը



- 12. Կնոջ կերպարի ամփոփումը՝ (Իսրայել)
- 13. Երկու գազանները
- 14. 144.000-ի պտուղները